ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 մայիսի 2024թ. թիվ 481

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ, Ռ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ, Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ,
Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ, Դ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ, Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ,
Ա.ԲԵՋԱՆՅԱՆԻՆ, Ա.ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ, Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ,
Ա.ԱԴԼՈՅԱՆԻՆ, Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Ա.Ադլոյանի 31.05.2024թ. զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Ղարսայանին, Վահրամ Դանիելյանին, Դավիթ Մանուչարյանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին, ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետներ Արտակ Դեմիրչյանին և Սամվել Խառատյանին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Արտաշես Ադլոյանին, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանին և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին ս/թ հունիսի 1-ից 2-ը ներառյալ՝ երկու օրով գործուղել ք.Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակի կառավարման որոշ աշխատանքների իրականացման և համակարգման համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝ Միեր Խեչումյանի, Ռուբեն Մարգարյանի, Վահրամ Ղարսայանի, Վահրամ Դանիելյանի, Դավիթ Մանուչարյանի, Աշոտ Նալբանդյանի, Արտավազդ Բեջանյանի, Արտակ Դեմիրչյանի, Սամվել Խառատյանի, Արտաշես Ադլոյանի, Վաղարշակ Եղիազարյանի և Արմեն Հակոբյանի ամենամյա արձակուրդին ավելացնել երկու օր:

4. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

01/06/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. մայիսի 31
ք.Վանաձոր